Զապել Եսայան

Նամակ Սոֆի Եսայանին 2

Կեսգիշեր է: Նստած եմ Կուպոլում, և հոգիս լի է հրճվանքով: Այսօր տեսնվեցի նախագահի հետ: Նա սիրալիությամբ ընդունեց ինձ և ասաց.

Գիտե՞ք, ժամանելուս պես Ձեր մասին եմ հարցրել:

Ուրախ եմ, որ չեք մոռացել ինձ:

Ինչպե՞ս կարող էի մոռանալ: Դուք մեր ամենահավատարիմ ու ամենաթանկագին բարեկամն եք սփյուռքում:

Այնուհետև ես հարց տվեցի, թե ինչու են ուշացնում մեր վիզաները: Նա զարմացավ, ափսոսանք հայտնեց և վերջում ասաց.

Իսկ ինչու՞ չհեռագրեցիք ինձ: Չէ՞ որ Դուք տարբեր առիթներով հեռագրել եք ուրիշների համար և անմիջապես պատասխան ստացել: Ձեր դիմումի հիման վրա ես արդեն կարգադրել եմ, որ վիզաներն ուղարկվեն:

Ես այստեղ եկել եմ ոչ թե խնդրանքների կապակցությամբ, այլ Ձեզ տեսնելու հաճույքի համար:

Ձեր բոլոր խնդրանքներն էլ սիրով կընդունվեն ու կիրագործվեն:

Այդ դեպքում պիտի խնդրեի, որ աղջկաս հետ միասին գնամ:

Ե՞րբ եք ցանկանում ճամփորդել:

Աշնանը:

Շատ լավ: Ամեն ինչ պատրաստ կլինի Ձեր որոշելիք թվականին:

Բայց որևէ բան որոշելուց առաջ կուզենայի խորհրդակցել Մեհրաբյանի հետ:

Նա կանչեց Մեհրաբյանին, և զրույցը շարունակեցինք երեքով: Մեհրաբյանը հիանալի մարդ է: Իմ մասին նա արդեն խոսել էր ամենաբարձր գովեստներով: Եվ այժմ էլ այնքան հոգատարություն ցուցաբերեց, որ ներքուստ ցանկություն ունեցա նրան համբուրելու: Նա ասաց.

Իմ կարծիքով՝ Տիկնոջ ներկայությունն այստեղ ավելի անհրաժեշտ է: Իսկապես, ես մենակս ոչինչ չեմ կարող անել այստեղ, մինչդեռ նրա աջակցությամբ կհաղթահարեմ բոլոր դժվարությունները: Բայց քանի որ նա շատ է ցանկանում այդ ուղևորությունը կատարել, ապա ես կհամաձայնեմ միայն այն պայմանով, որ այնտեղ մնա երեք կամ չորս ամիս, իր բացակայության ընթացքում ես շարունակի աշխատակցել և ապա նորից ետ գա:

Դուք մեծ պատիվ եք անում ինձ: Ես կջանամ արժանի լինել այդ պատվին:

Նույն րոպեին ներս մտավ Թահմաղը: Մեհրաբյանը դեռ շարունակում էր շռայլորեն գովաբանել իմ ժուռնալիստական ընդունակությունները: Եվ ավելացրեց.

Դուք, որպես խոշոր արձակագիր, փայլուն արդյունքների կհասնեք բոլոր ժանրերի մեջ... և այլն:

Ի վերջո, նախագահը խոստացավ մի գեղեցիկ բնակարան պատրաստել տալ ինձ ու քեզ համար: Ինչ վերաբերում է Հրանտին, ապա նա այնտեղ կկատարելագործի իր մասնագիտությունը, որովհետև 23 24 տարեկան հասակում նա դեռ շատ ջահել է, որպեսզի ուսումը չշարունակի: Նրա համար կստեղծեն բոլոր պայմանները:

Վերջացնում եմ նամակս և համբուրում երկուսիդ: Կարծում եմ, որ դուք էլ ինձ չափ պիտի ուրախանաք:

Ձեր՝ Զապել

Բնագիրը՝ ԳԱԹ, Զապել Եսայանի ֆոնդ, № 200 (թարգմանություն ֆրանսերեն բնագրից):

1931, դեկտեմբերի 20, Բարիզ